«Գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 400-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության 2023 թվականի

_____ _____-ի N_____-Ն որոշման

ԿԱՐԳ

ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ հարկային մարմին) կողմից հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցնելու, պահպանելու և տնօրինելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը ենթակա է բռնագրավման՝

1) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)
389-րդ և 390-րդ հոդվածներով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորման ենթակա՝ չդրոշմավորված, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով դրոշմավորված ապրանքների իրացման դեպքում.

2) Օրենսգրքի 407-րդ հոդվածով սահմանված՝ ապօրինի գործունեության ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված ապրանքների իրացման դեպքում.

3) Օրենսգրքի 424-րդ հոդվածով սահմանված՝ ակցիզային դրոշմանիշերով և (կամ) դրոշմապիտակներով դրոշմավորման կանոնի խախտման այն դեպքում, երբ օտարվող ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ նշված չլինելու դեպքում՝ Օրենսգրքով սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է 50 հազար դրամը:

2. ԳՈՒՅՔԸ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼԸ

3. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցվում է անհատույց, հարկային մարմնի ընդունած՝ հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ որոշման հիման վրա:

4. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում նախատեսող հարկային իրավախախտում հայտնաբերելու դեպքում հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձը կազմում է արձանագրություն՝ համաձայն սույն կարգի N1 ձևի և բռնագրավման ենթակա գույքն ի պահ է հանձնում հարկ վճարողին, որի մասին նշում է կատարվում արձանագրությունում: Հարկ վճարողի կողմից գույքի պահպանությունն իրականացնելուց հրաժարվելու դեպքում հարկային հսկողություն

իրականացնող պաշտոնատար անձը գույքը վերցնում է պատասխանատու պահպանության, որի մասին նշում է կատարվում արձանագրությունում:

5. Սույն կարգի 5-րդ կետում նշված արձանագրությունը կազմելուց հետո հարկային մարմինն անհապաղ ձեռնարկում է Օրենսգրքով սահմանված՝ հարկային պարտավորությունների կատարումն ապահովող՝ գույքի արգելանքի ապահովման միջոցը, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել կամ որի պահպանման ժամկետն արգելանք դնելու պահին պակաս է երեք ամսից: Այն գույքը, որի վրա արգելանք չի կարող դրվել, հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ որոշման հիման վրա հարկային մարմնի կողմից վերցվում է պատասխանատու պահպանության, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ համաձայն սույն կարգի N2 ձևի, բացառությամբ սույն կարգի 5-րդ կետում նշված հարկ վճարողի կողմից գույքի պահպանություն իրականացնելուց հրաժարվելու հիմքով հարկային մարմնի կողմից գույքը պատասխանատու պահպանության վերցված լինելու դեպքի:

6. Հարկային մարմնի կողմից հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավումը կիրառվում է հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի՝ «Վարչարարության հիմունքների կամ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընդունած որոշման հիման վրա՝ համաձայն սույն կարգի N3 ձևի: Հարկային մարմնի ղեկավարը հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ որոշումը ընդունում է սույն կարգի 5-րդ կետով նշված արձանագրությունը կազմելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. Անձը, ում նկատմամբ հարկային մարմինն ընդունել է հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ որոշում, կարող է բողոքարկել այդ որոշումը, այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում: Նշված ժամկետում որոշումը չբողոքարկելու կամ բողոքարկման արդյունքում որոշումը ուժի մեջ թողնելու (այդ թվում՝ մասնակի) դեպքում, դրանք տեղի ունենալու օրվան հաջորդող օրվանից հարկային մարմնի որոշումը դառնում է անբողոքարկելի, իսկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է կամովին փոխանցված պետությանը՝ ի դեմս հարկային մարմնի: Հարկ վճարողի կողմից հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ հարկային մարմնի ընդունած որոշումը կամ այդ որոշումը վարչական կարգով բողոքարկելու վերաբերյալ դիմում-բողոքը մերժելու (այդ թվում մասնակի) մասին որոշումը սույն կետում նշված ժամկետներում օրենքով սահմանված դատական կարգով բողոքարկելու դեպքում՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետությանն է փոխանցվում դատարանի վճռի հիման վրա: Սույն կետում նշված ժամկետներից հետո գույքի բռնագրավման վերաբերյալ հարկային մարմնի որոշումն օրենքով սահմանված դատական կարգով բողոքարկելու դեպքում, գույքը հարկադիր կարգով պետական սեփականություն դարձնելու և դրա հետևանքով կողմերի կրած վնասները հատուցելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի համաձայն:

8. Մինչև հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի

բռնագրավման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը, հարկային իրավախախտում թույլ տված անձը կարող է կամովին այդ գույքը սեփականության իրավունքով հանձնել պետությանը, այդ մասին գրավոր հայտնելով հարկային մարմնին: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը համարվում է կամովին փոխանցված պետությանը հարկ վճարողի գրավոր տեղեկացումը հարկային մարմնի կողմից ստանալու օրվան հաջորդող օրվանից:

3. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

9. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքը պետական սեփականություն համարվելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը գույքը վերցնում է պատասխանատու պահպանության, եթե բռնագրավման ենթակա գույքը մինչ այդ սույն կարգին համապատասխան հարկային մարմնի կողմից չի վերցվել:

10. Հարկային մարմինը պատասխանատու պահպանության վերցրած գույքը կարող է ի պահ հանձնել գույքի պահատվության գործունեություն իրականացնող մասնագիտացված կազմակերպությանը՝ պահատվության պայմանագրի հիման վրա:

11. Հարկադիր կարգով որպես պետական սեփականություն վերցված գույքի պահպանման հետ կապված ծախսերը գույքը պետական սեփականություն համարվելու օրվան հաջորդող օրվանից կրում է պետությունը՝ ի դեմս հարկային մարմնի:

12. Հարկային մարմինը 50 մլն. դրամից ավելի արժողությամբ գույքը պետական սեփականություն համարվելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, գույքը որպես պետական սեփականություն վերցնելու իրավական հիմքերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ գույքի տնօրինման վերաբերյալ որոշում կայացնելու և այն հաշվառման վերցնելու նպատակով:

13. Հարկային մարմինը՝ մինչև 50 մլն դրամ արժողությամբ գույքը պետական սեփականություն համարվելուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է հրաման գույքի տնօրինման վերաբերյալ, բացառությամբ սույն կարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված դեպքերի:

14. Շուտ փչացող կամ այն գույքը, որը դժվար է պահել կամ որի պահելու ծախսերը ողջամտորեն արդարացված չեն, գույքը պետական սեփականություն համարվելու պահից կարող է իրացվել հարկային մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա:

15. Եթե գույքը երկարատև պահելը կարող է վտանգավոր լինել մարդու կյանքի, առողջության կամ շրջակա միջավայրի համար, ապա գույքը պետական սեփականություն համարվելու պահից հարկային մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով ոչնչացվում է:

16. Հարկային մարմինը՝ սույն կարգի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերում նշված

հրամաններն ընդունելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը ՝ տնօրինման ենթակա գույքը հաշվառման վերցնելու նպատակով:

4. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

17. Գույքի տնօրինման եղանակներ են՝

1) գույքը իրացնելը.
2) գույքը շահառու պետական մարմնին կամ պետական կազմակերպությանը անհատույց փոխանցելը.
3) գույքը ոչնչացնելը:

18. Գույքի իրացման եղանակով տնօրինման դեպքում գույքի իրացումը կազմակերպում է հարկային մարմինը՝ աճուրդային կարգով: Գույքի իրացման սկզբնական գինը որոշվում է հարկային մարմնի կողմից՝ հաշվի առնելով դրա շուկայական գինը, պահպանման և իրացման հետ կապված ծախսերը, գույքի պահպանվածության աստիճանն ու որակական հատկանիշները: Գույքի իրացումից պետական բյուջե փոխանցման ենթակա գումարը հարկային մարմինը պետական բյուջե է փոխանցում գույքի իրացումից գումարների ստացման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

19. Գույքը շահառու պետական մարմնին կամ պետական կազմակերպությանը անհատույց փոխանցելու եղանակով տնօրինման դեպքում հարկային մարմինը, գույքի տնօրինման վերաբերյալ ընդունված իրավական ակտի համաձայն՝ գույքն անհատույց փոխանցում է համապատասխան պետական մարմնին կամ պետական կազմակերպությանը, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան արձանագրություն և գույքը հաշվառման վերցնելու նպատակով գրավոր տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

20. Գույքը ոչնչացման եղանակով տնօրինման դեպքում, գույքի տնօրինման վերաբերյալ ընդունված իրավական ակտի համաձայն՝ հարկային մարմնի հրամանով կազմվում է հանձնաժողով՝ շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել հատուկ գիտելիքներ ունեցող մասնագետներ: Գույքի ոչնչացման մասին հանձնաժողովի կողմից կազմվում է ակտ, որում նշվում են այն իրավական հիմքերը, որի հիման վրա գույքը դարձել է պետության սեփականությունը, գույքի նկարագիրը, տեսակը, քանակը և ոչնչացումից առաջ առկա գույքի ֆիզիկական վիճակը: Գույքը կարող է ոչնչացվել ջարդման, կտրտման, այրման և այլ եղանակներով: Ոչնչացման ակտը կազմվում է երկու օրինակից, որն ստորագրվում է ոչնչացման հանձնաժողովի անդամների կողմից: Ակտի մեկ օրինակը գույքի հաշվառման նպատակով ուղարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, իսկ մյուս օրինակը պահվում է հարկային մարմնում:

_

ՁԵՎ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N .....

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔՆ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«____»_____ 20___ թ.
_____

(Կազմման վայրը)

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայողներ

_____
_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____
_____

_____
_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____
_____

2. _____
____ մոտ

(Անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ)

3. _____ «____»_____20___թ. թիվ_____

(Հանձնարարագիրը հրապարակած պաշտոնատար անձ)

հանձնարարագրի (հրամանի) հիման վրա իրականացված հսկողական աշխատանքների արդյունքում հայտնաբերեցինք
_____

(Իրավախախտման նկարագրությունը)

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

4. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 413-րդ հոդվածը՝ հետևյալ գույքը ենթակա է բռնագրավման.

Հ/Հ	**Ապրանքի անվանումը**	**Նկարագիրը**	**Պիտանիության վերջնաժամկետը (օր, ամիս, տարի)**	**Չափման միավոր**	**Քանակը**	**Միա իրաց գինը (դրա**

ԸՆԴԱՄԵՆԸ

5. Գույքի բռնագրավում կիրառելու նպատակով՝ հարկային իրավախախտման առարկա հանդիսացող սույն արձանագրության 4-րդ կետում նշված գույքը հանձնեցինք ի պահ_____, մինչև գույքի բռնագրավում կիրառելու

(Անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անվանումը)

վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի որոշման կայացումը:

6. ***Ստացա արձանագրության մեկ օրինակը և ի պահ ընդունեցի սույն արձանագրության 4-րդ կետում նշված գույքը:***

Ծանոթացա ի պահ հանձնված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

Գույքի նկատամբ օրենքով բավարար _____
_____

իրավունքներ ունեցող անձ կամ նրա ներկայացուցիչ *(Ստորագրությունը*)
(*Անունը, ազգանունը*)

7. ***Ստացա արձանագրության մեկ օրինակը և հրաժարվեցի ի պահ ընդունել սույն արձանագրության 4-րդ կետում նշված գույքը:***

Գույքի նկատամբ օրենքով բավարար _____
_____

իրավունքներ ունեցող անձ կամ նրա ներկայացուցիչ *(Ստորագրությունը*)
(*Անունը, ազգանունը*)

8. _____
_____

(Նշում արձանագրությունը ստորագրելուց և (կամ) ստանալուց հրաժարվելու մասին)

9. Հաշվի առնելով, որ
_____

(Գույքը հարկային մարմնի կողմից պատասխանատու պահպանության վերցնելու հիմքը)

_____

_____

_____

և ղեկավարվելով ՀՀ կառավարության «____»_____20___թ. թիվ_____ որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ գույքը վերցրեցինք պատասխանատու պահպանության:

_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը) *(Ստորագրություն)*

_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը) *(Ստորագրություն)*

Ընթերականեր 1. _____

(եթե այդպիսիք կան) *(Ստորագրությունը)* *(Անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)*

2. _____ _____

(Ստորագրությունը) *(Անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)*

ՁԵՎ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N .....

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«____»_____ 20___ թ.
_____

(Կազմման վայրը)

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայողներ

_____
__

(Հարկային ծառայողի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____
__

(Հարկային ծառայողի պաշտոնը, անունը, ազգանունը)

2. Հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ նախագահի «____»_____20___թ. N_____ հանձնարարագրի հիման վրա իրականացված հսկողական աշխատանքների արդյունքում կայացված գույքի բռնագրավման վերաբերյալ ՀՀ ՊԵԿ նախագահի «____»_____ 20__թ. N _____

որոշումը և ՀՀ կառավարության «____»_____ 20__թ. N _____ որոշման հավելվածի _____-րդ կետը,

3. _____ ___ -ից

(Անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ)

4. պատասխանատու պահպանության վերցրեցինք հետևյալ գույքը.

Հ/Հ	**Ապրանքի անվանումը**	**Նկարագիրը**	**Պիտանիության վերջնաժամկետը (օր, ամիս, տարի)**	**Չափման միավոր**	**Քանակը**	**Միա իրաց գինը (դրա**

ԸՆԴԱՄԵՆԸ

5. Գույքը վերցնելու վայրի (օբյեկտի) հասցեն, _____

_____

6. Գույքը վերցնելու ժամանակը և այլ հանգամանքներ _____

_____

7. Գույքը պետական սեփականություն համարվելու օրը, ամիսը, տարին _____

_____ _____

(Հարկային ծառայողի անունը, ազգանունը) *(Ստորագրություն)*

_____ _____

(Հարկային ծառայողի անունը, ազգանունը) *(Ստորագրություն)*

Ընթերականեր 1. _____
_____

(եթե այդպիսիք կան) *(Ստորագրությունը)* (*Անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)*

2. _____ _____

(Ստորագրությունը) (*Անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները)*

Ստացա արձանագրության մեկ օրինակը

Գույքի նկատամբ օրենքով բավարար _____
_____

իրավունքներ ունեցող անձ կամ նրա ներկայացուցիչ *(Ստորագրությունը)* (*Անունը, ազգանունը*)

_____
_____

(Նշում արձանագրությունը ստորագրելուց և (կամ) ստանալուց հրաժարվելու մասին)

_

ՁԵՎ N 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՈՐՈՇՈՒՄ N .....

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«____»_____ 20___ թ.
_____

(Կազմման վայրը)

Հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ նախագահի «____»_____20___թ. թիվ_____ հանձնարարագրի հիման վրա
_____

(Անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ)

_____
__

մոտ իրականացված հսկողական աշխատանքների արդյունքները, հարկային մարմնի կողմից հարկային իրավախախտման առարկա հանդիսացող գույքի բռնագրավում նախատեսող հարկային իրավախախտման և բռնագրավման ենթակա գույքն ի պահ հանձնելու վերաբերյալ «____»_____20___թ. N_____ արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 413-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության «____»_____20___թ. N_____ որոշման հավելվածով սահմանված կարգի 6-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հարկային իրավախախտման առարկա հանդիսացող հետևյալ գույքի նկատմամբ կիրառել բռնագրավում.

Հ/Հ	**Ապրանքի անվանումը**	**Նկարագիրը**	**Պիտանիության վերջնաժամկետը (օր, ամիս, տարի)**	**Չափման միավոր**	**Քանակը**	**Միա իրաց գինը**

(դրա

ԸՆԴԱՄԵՆԸ

2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային ծառայողներ

_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

_____

(Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը)

_____

ա) սույն որոշման օրինակը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով եռօրյա ժամկետում հանձնել հարկ վճարողին,

բ) սույն որոշման 1-ին կետով նշված գույքը _____

(Գործողության կատարման հիմքը և ժամկետը)

_____

Հայաստանի Հանրապետության կառավարության «____»_____20___թ. N_____ որոշման հավելվածով սահմանված կարգով վերցնել պատասխանատու պահպանության և տեղեկացնել ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարին:

3. ՀՀ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել գույքի պատասխանատու պահպանությունը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել երկամսյա ժամկետում՝

վերադասության կարգով կամ ՀՀ վարչական դատարան:

ՀՀ ՊԵԿ
նախագահ _____ _____

(Անունը և ազգանունը)
(Ստորագրություն)

_____

(որոշման ստորագրության էջի դարձերես)

Ստացա որոշման մեկ օրինակը

_____
_____ «____»_____ 20___ թ.

(Անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը *(Ստորագրությունը)*

(անհատ ձեռնարկատեր նշումով) կամ իրավաբանական անձի

գործադիր մարմնի ղեկավար (գրագրության ընդունման համար

պատասխանատու անձ՝ հատուկ առաքման դեպքում)

_____
_____

(Նշում որոշման օրինակը ստորագրելուց և (կամ) ստանալուց հրաժարվելու մասին)

_____
_____

(Նշում ծանուցման այլ եղանակի մասին)